ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«18» ապրիլի 2015թ

ՀՐԱՄԱՆ
№ 87

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 79-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 11-րդ և 19-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 216-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի ապրիլի 15-ի «Պետական ոլորտի ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու հավակնորդ ծառայողների ցուցակը հաստատելու, հավակնորդ ծառայողների ցուցակում ընդգրկված ծառայողների կողմից սերվերի տվյալների բանկ մուտքի բանալի ստանալու և բնակարանների ընտրության վերջնաժամկետը սահմանելու մասին» N 79-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) հրամանով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 333-335-րդ կետերով.

333.	ԴՍԼ8176	ՀՀ կառավարության աշխատակազմ	-	-
334.	ԼԱՌ5008	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	-	-

335.	ՀՄՌ9075	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	-	-

2) հրամանի 2-րդ կետի <ապրիլի 20-ը> բառերը փոխարինել <ապրիլի 28-ը> բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կայքում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

<18> ապրիլի 2015թ
ք. Երևան